ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

17 մարտի 2016 թվականի **թիվ 17** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրագործման մասով ակտերի եւ միջոցառումների մշակման ծրագիրը հաստատելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 92-րդ հոդվածի 6-րդ կետի եւ Եվրասիական միջկառավարական խորհրդի 2015 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 9 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրագործման նպատակով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Հաստատել Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրագործման մասով ակտերի եւ միջոցառումների մշակման՝ կից ներկայացվող ծրագիրը:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի
2016 թվականի մարտի 17-ի թիվ 17 որոշմամբ

ԾՐԱԳԻՐ

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրագործման մասով ակտերի եւ միջոցառումների մշակման

Միջոցառումը*	Կատարողը	Որոշումն ընդունող մարմինը	Կատարման ժամկետը
I. Արդյունաբերական կոոպերացիայի եւ սուբկոնտրակտացիայի Եվրասիական ցանցի ստեղծում			
1. Արդյունաբերական կոոպերացիայի եւ սուբկոնտրակտացիայի զարգացման եւ ցանցերի ստեղծման համաշխարհային փորձի վերլուծում	Եվրասիական տնտեսական հանձնաժողով Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ (այսուհետ համապատասխանաբար՝ Հանձնաժողով, Միության անդամ պետություններ)		մինչեւ 2016 թվականի սեպտեմբերի 1-ը
2. Արդյունաբերական կոոպերացիայի եւ սուբկոնտրակտացիայի ցանցի ստեղծման այնպիսի հայեցակարգի մշակում, որը ներառում է դրա ձեւավորման եւ ֆինանսավորման կարգը	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի խորհուրդ	մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 1-ը

* Փաստաթղթի անվանումը կարող է ճշտվել դրա մշակման ընթացքում, սույն ծրագրում փոփոխությունները և լրացումները կատարվում են Հանձնաժողովի կոլեգիայի նորմատիվ ակտով:

Միջոցառումը*	Կատարողը	Որոշումն ընդունող մարմինը	Կատարման ժամկետը
3. Անդամ պետություններում արդյունաբերական կոոպերացիայի եւ սուբկոնտրակտացիայի ցանցի ազգային հատվածների ձեւավորում	անդամ պետություններ	-	2017-2018 թվականներ
4. Արդյունաբերական կոոպերացիայի եւ սուբկոնտրակտացիայի եվրասիական ցանցի գործունեությունը անդամ պետությունների ազգային հատվածների միավորման միջոցով	անդամ պետություններ, Հանձնաժողով		2019 թվականից
II. Անդամ պետությունների կողմից կոոպերացիոն այն նախագծերի համաձայնեցման կարգի մասին, որոնք ունեն ինտեգրացիոն ներուժ եւ Եվրասիական զարգացման բանկ են ներկայացվում դրանց առաջնահերթ ֆինանսավորման հարցը քննարկելու նպատակով, ինչպես նաեւ այդպիսի նախագծերին համապատասխանելու չափանիշների մասին			
5. Նախագծերը կոոպերացիոն նախագծերի շարքին դասելու չափանիշների մշակում	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի խորհուրդ	մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 1-ը
6. Կոոպերացիոն նախագծերի (այդ թվում՝ նախագծի նկարագրի) ուսումնասիրման կարգի մշակում՝ դրանք Եվրասիական զարգացման բանկ ուղարկելու համար	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի խորհուրդ	մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 1-ը
7. Հանձնաժողովի, անդամ պետությունների եւ Եվրասիական զարգացման բանկի՝ կոոպերացիոն նախագծերի իրագործման եւ ֆինանսավորման մասով փոխգործակցության մեխանիզմի մշակում	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի խորհուրդ	մինչեւ 2016 թվականի սեպտեմբերի 1-ը
III. Կոոպերացիոն համագործակցության այն ուղղությունների մասին, որոնց ցանկը անդամ պետությունների կողմից ներկայացվում է Եվրասիական զարգացման բանկ՝ այդպիսի ուղղություններին համապատասխանող նախագծերի առաջնահերթ ֆինանսավորման հարցը քննարկելու նպատակով			
8. Վերլուծության անցկացում եւ արդյունաբերական կոոպերացիայի ներուժի բացահայտում	Հանձնաժողով, անդամ պետություններ	—	մինչեւ 2016 թվականի սեպտեմբերի 1-ը
9. Կոոպերացիոն համագործակցության փոխշահավետ ուղղությունների ցանկի մշակում Եվրասիական զարգացման բանկի կողմից՝ կոոպերացիոն նախագծերն առաջնահերթ ֆինանսավորելու համար	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի խորհուրդ	մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31–ը

Միջոցառումը*	Կատարողը	Որոշումն ընդունող մարմինը	Կատարման ժամկետը
10. Կոոպերացիոն փոխգործակցության եւ կոոպերացիոն նախագծերի իրագործման դիտանցում	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի կոլեգիա	տարեկան
IV. Եվրասիական զարգացման բանկի կողմից առաջնահերթ ֆինանսավորման համար ինտեգրացիոն ներուժ ունեցող կոոպերացիոն նախագծերի ուսումնասիրման մասին			
11. Անդամ պետությունների կողմից Եվրասիական զարգացման բանկի հետ համատեղ Եվրասիական զարգացման բանկի կողմից առաջնահերթ ֆինանսավորման համար ինտեգրացիոն ներուժ ունեցող կոոպերացիոն նախագծերի ուսումնասիրման հարցերով աշխատանքային խմբի ստեղծում	Հանձնաժողով, անդամ պետություններ	Արդյունաբերության հարցերով խորհրդատվական կոմիտե	2016 թվական
12. Եվրասիական զարգացման բանկի կողմից առաջնահերթ ֆինանսավորման համար ինտեգրացիոն ներուժ ունեցող կոոպերացիոն նախագծերի ուսումնասիրում Արդյունաբերության հարցերով խորհրդատվական կոմիտեի կողմից	Հանձնաժողով, անդամ պետություններ	Արդյունաբերության հարցերով խորհրդատվական կոմիտե	ըստ անհրաժեշտության
V. Անդամ պետությունների կողմից համատեղ արտադրված արտադրանքի որոշման համար տեխնոլոգիական գործողությունների հաշվառման մեխանիզմի օգտագործման մասին			
13. Միության մարմնի՝ անդամ պետությունների կողմից համատեղ արտադրված արտադրանքի որոշման համար տեխնոլոգիական գործողությունների հաշվառման մեխանիզմի օգտագործման մասին նորմատիվ ակտի մշակում	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի խորհուրդ	Մինչեւ 2016 թվականի նոյեմբերի 1–ը
14. Արդյունաբերության գերակա ճյուղերում համատեղ արտադրված արտադրանքի համար տեխնոլոգիական գործողությունների որոշում	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի խորհուրդ	մինչեւ 2017 թվականի նոյեմբերի 1-ը
VI. Միության շուկան կեղծված արտադրանքից պաշտպանելու միջոցների համալիրի մասին			
15. Ներքին շուկան արդյունաբերական արտադրանքի ապօրինի շրջանառությունից պաշտպանելու միջազգային փորձի վերլուծում	Հանձնաժողով, անդամ պետություններ	-	Մինչեւ 2016 թվականի հոկտեմբերի 1–ը

Միջոցառումը*	Կատարողը	Որոշումն ընդունող մարմինը	Կատարման ժամկետը
16. Միության շուկան արդյունաբերական արտադրանքի ապօրինի շրջանառությունից պաշտպանելու՝ անդամ պետությունների կողմից համաձայնեցված միջոցների համալիրի վերաբերյալ առաջարկների ներկայացում	անդամ պետություններ, Հանձնաժողով		Մինչեւ 2017 թվականի հոկտեմբերի 1–ը
VII. Երրորդ երկրների շուկաներում անդամ պետությունների համատեղ արտադրված արդյունաբերական արտադրանքի առաջմղման մասին			
17. Անդամ պետությունների արդյունաբերական արտադրանքն արտահանելու համար առաջմղման մեխանիզմների օգտագործման միջազգային փորձի (Չինաստան, Եվրոպական միություն եւ այլն) վերլուծում	Հանձնաժողով, անդամ պետություններ	—	2016-2017 թվականներ
18. Երրորդ երկրների հետ ազատ առեւտրի գոտիների ստեղծման մասին կնքվող համաձայնագրերի շրջանակներում անդամ պետությունների արդյունաբերական արտադրանքի առաջմղման հնարավորությունների վերլուծում	Հանձնաժողով, անդամ պետություններ		2016-2017 թվականներ
19. Անդամ պետությունների համատեղ արտադրված արդյունաբերական արտադրանքն արդյունաբերության գերակա ճյուղերում արտահանման առաջմղման հնարավորությունների վերլուծում	Հանձնաժողով, անդամ պետություններ		2016-2017 թվականներ
20. Անդամ պետությունների գերակա ճյուղերի համատեղ արտադրված արտադրանքը երրորդ երկրների շուկաներ առաջմղման միջոցների մասին առաջարկության մշակում	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի խորհուրդ	2016-2017 թվականներ
21. Միության եւ Մետաքսե ճանապարհի տնտեսական գոտու միակցման համաձայնեցված մոտեցումների շրջանակներում համատեղ կոոպերացիոն նախագծերի իրագործման հնարավոր ուղղությունների վերաբերյալ առաջարկների մշակում	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի խորհուրդ	2016-2017 թվականներ
VIII. Միության շրջանակներում տեխնոլոգիական արդիականացումն արագացնելու եւ կազմակերպությունների նորարարական ակտիվությունը բարձրացնելու նպատակներով անդամ պետությունների համագործակցության առաջնահերթությունների մասին			
22. Միության շրջանակներում տեխնոլոգիական արդիականացումն արագացնելու եւ կազմակերպությունների ներդրումային ակտիվությունը բարձրացնելու նպատակներով անդամ պետությունների համագործակցության առաջնահերթությունների ցանկի մասին առաջարկության մշակում՝ հաշվի առնելով անդամ պետությունների կողմից անցկացվող կիրառական եւ հիմնարար հետազոտությունները	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի կոլեգիա	2016 թվական

Միջոցառումը*	Կատարողը	Որոշումն ընդունող մարմինը	Կատարման ժամկետը
IX. Անդամ պետությունների արդյունաբերական-նորարարական ենթակառուցվածքի օբյեկտներ ստեղծելու եւ դրանց գործունեությունն ապահովելու լավագույն փորձի տարածման մասին			
23. Անդամ պետությունների արդյունաբերական նորարարական ենթակառուցվածքի օբյեկտներ ստեղծելու եւ դրանց գործունեությունն ապահովելու լավագույն փորձի տարածման մասին առաջարկության մշակում	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի կոլեգիա	2016 թվական
X. Անդամ պետությունների արդյունաբերության թվայնացման նկատմամբ մոտեցումների մասին			
24. Արդյունաբերության զարգացման համաշխարհային փորձի եւ անդամ պետությունների արդյունաբերության թվայնացման նկատմամբ մոտեցումների վերլուծում	Հանձնաժողով, անդամ պետություններ	-	2016 թվական
25. Անդամ պետությունների արդյունաբերության թվային տրանսֆորմացիայի եւ Միության արդյունաբերության միասնական թվային տարածքի ձեւավորման համար պայմաններ ստեղծելու հայեցակարգի մշակում	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի խորհուրդ	2017 - 2018 թվականներ
26. Արդյունաբերության թվային տրանսֆորմացիայի եւ Միության արդյունաբերության միասնական թվային տարածքի ձեւավորման համար պայմանների ստեղծում	անդամ պետություններ, Հանձնաժողով	-	2018 - 2019 թվականներ
XI. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման, գործունեության եւ ֆինանսավորման մասին			
27. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման, գործունեության եւ ֆինանսավորման մասին հիմնադրույթի հաստատում	անդամ պետություններ, Հանձնաժողով	Եվրասիական միջկառավարական խորհուրդ	2016 թվական
28. Եվրասիական միջկառավարական խորհրդի կողմից հաստատվող՝ եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման ուղղությունների ցանկով նախատեսված՝ Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորում	անդամ պետություններ, Հանձնաժողով		2016-2019 թվականներ
29. Եվրասիական տեխնոլոգիական հարթակների միջոցով անդամ պետությունների համատեղ նախագծերի իրագործում	Եվրասիական տեխնոլոգիական հարթակներ	—	2018 - 2021 թվականներ

Միջոցառումը*	Կատարողը	Որոշումն ընդունող մարմինը	Կատարման ժամկետը
XII. Արդյունաբերության ոլորտում միջպետական ծրագրերի եւ նախագծերի մշակման, իրագործման եւ ֆինանսավորման մասին			
30. Միջպետական ծրագրերի եւ նախագծերի մշակման, իրագործման եւ ֆինանսավորման մասին հիմնադրույթի մշակում	անդամ պետություններ, Հանձնաժողով	Եվրասիական միջկառավարական խորհուրդ	Մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 31–ը
XIII. Հաստոցաշինության եվրասիական ինժինիրինգային կենտրոնի ստեղծման հայեցակարգի մասին			
31. Հաստոցաշինության եվրասիական ինժինիրինգային կենտրոնի ստեղծման հայեցակարգի մշակում	անդամ պետություններ, Հանձնաժողով	Եվրասիական միջկառավարական խորհուրդ	մինչեւ 2016 թվականի սեպտեմբերի 1-ը
XIV. Տեխնոլոգիաների տրանսֆերի եվրասիական ցանցի ստեղծում			
32. Միության մարմնի՝ տեխնոլոգիաների տրանսֆերի եվրասիական ցանցի ստեղծման եւ գործունեության մասին նորմատիվ ակտի մշակում, այդ թվում՝	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի խորհուրդ	2017 թվական
տեխնոլոգիաների տրանսֆերի եվրասիական ցանցի ստեղծման եւ գործունեության հայեցակարգի մշակում			
տեխնոլոգիաների տրանսֆերի եվրասիական ցանցի ձեւավորման եւ ֆինանսավորման կարգի մշակում			
33. Տեխնոլոգիաների տրանսֆերի եվրասիական ցանցի ազգային հատվածների ձեւավորում	անդամ պետություններ		2018 թվական
34. Տեխնոլոգիաների տրանսֆերի եվրասիական ցանցի գործունեությունն ազգային հատվածների միավորման միջոցով	անդամ պետություններ, Հանձնաժողով	-	2019 թվականից
XV. Միության շրջանակներում արդյունաբերական արտադրանքի շուկայի դիտանցման կարգի մասին			
35. Միության շրջանակներում արդյունաբերական արտադրանքի շուկայի դիտանցման կարգի մասին հիմնադրույթի մշակում	Հանձնաժողով, անդամ պետություններ	Հանձնաժողովի խորհուրդ	2016 թվական
36. Միության շրջանակներում արդյունաբերական արտադրանքի շուկայի դիտանցման արդյունքների վերաբերյալ Հանձնաժողովի զեկույցը անդամ պետություններին	Հանձնաժողով	Հանձնաժողովի կոլեգիա	յուրաքանչյուր տարի՝ սկսած 2016 թվականից

Միջոցառումը*	Կատարողը	Որոշումն ընդունող մարմինը	Կատարման ժամկետը
37. Անդամ պետությունների համագործակցության եւ արդյունաբերական ձեռնարկությունների զարգացման համար արգելքների հայտնաբերման մասով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի իրագործման փոխադարձ եւ ճյուղային ազդեցության արդյունավետության հաշվառման հարցերով աշխատանքային խմբի նիստերին մասնակցում	անդամ պետություններ, Հանձնաժողով		մշտական
XVI. Անդամ պետությունների համակարգաստեղծ արդյունաբերական ձեռնարկությունների դիտանցման կարգի մասին			
38. Անդամ պետությունների համագործակցության եւ արդյունաբերական ձեռնարկությունների զարգացման համար արգելքների հայտնաբերման նպատակով անդամ պետությունների համակարգաստեղծ արդյունաբերական ձեռնարկությունների դիտանցման կարգի մասին հիմնադրույթի մշակում	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի խորհուրդ	2017 թվական
39. Հանձնաժողովի զեկույցը անդամ պետություններին արգելքների հայտնաբերմանն ուղղված՝ համակարգաստեղծ արդյունաբերական ձեռնարկությունների դիտանցման արդյունքների մասին	Հանձնաժողով	Հանձնաժողովի կոլեգիա	յուրաքանչյուր տարի՝ սկսած 2017 թվականից
XVII. Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրագործման արդյունքների ամենամյա դիտանցման եւ վերլուծության մասին			
40. Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրագործման արդյունքների ամենամյա դիտանցման եւ վերլուծության մասին հիմնադրույթի մշակում	անդամ պետություններ, Հանձնաժողով	Հանձնաժողովի խորհուրդ	2016 թվական
XVIII. Տնտեսական գործունեության գերակա տեսակների եւ անդամ պետությունների համագործակցության համար գերակա նշանակություն ունեցող զգայուն ապրանքների մասով արդյունաբերական համագործակցության զարգացման մասին			
41. Անդամ պետությունների կողմից զգայուն ապրանքների վերաբերյալ խորհրդակցությունների անցկացում	Հանձնաժողով, անդամ պետություններ	—	անդամ պետությունների նախաձեռնությամբ

Միջոցառումը*	Կատարողը	Որոշումն ընդունող մարմինը	Կատարման ժամկետը
42. Միության շուկա երրորդ երկրներից մատակարարվող նույնանման ներմուծման արտադրանքի հետ կապված սուր մրցակցության առաջացման դեպքում անդամ պետությունների արդյունաբերական ձեռնարկությունների շահերի պաշտպանության հարցով անդամ պետությունների կողմից խորհրդակցությունների անցկացում	Հանձնաժողով, անդամ պետություններ		անհրաժեշտության դեպքում
43. Միության մարմնի՝ նանոարդյունաբերության ոլորտում անդամ պետությունների համագործակցության զարգացման մասին նորմատիվ ակտի մշակում	Հանձնաժողով, անդամ պետություններ	-	անհրաժեշտության դեպքում
44. Միության մարմնի՝ ամբարձիչ-տրանսպորտային սարքավորումների ոլորտում անդամ պետությունների համագործակցության զարգացման մասին նորմատիվ ակտի մշակում	Հանձնաժողով, անդամ պետություններ	—	անհրաժեշտության դեպքում
45. Շինարարական նյութերի արտադրության, այդ թվում՝ ցեմենտի եւ ապակու արտադրության ոլորտում անդամ պետությունների համագործակցության զարգացման մասին առաջարկության ներկայացում Հանձնաժողովի խորհրդի քննարկմանը	Հանձնաժողով, անդամ պետություններ	—	անհրաժեշտության դեպքում
46. Միության մարմնի՝ սեւ մետալուրգիայի ճյուղի արտադրանքի արտադրության ոլորտում անդամ պետությունների համագործակցության զարգացման մասին առաջարկության լրամշակում	Հանձնաժողով, անդամ պետություններ	—	անհրաժեշտության դեպքում
47. Միության մարմնի՝ գունավոր մետալուրգիայի ճյուղի արտադրանքի արտադրության ոլորտում անդամ պետությունների համագործակցության զարգացման մասին առաջարկության մշակում	Հանձնաժողով, անդամ պետություններ	—	անհրաժեշտության դեպքում
48. Միության մարմնի՝ գյուղատնտեսական մեքենաշինության ոլորտում անդամ պետությունների համագործակցության զարգացմանն ուղղված առաջարկության մշակում	Հանձնաժողով, անդամ պետություններ	—	անհրաժեշտության դեպքում
49. Թեթեւ արդյունաբերության ոլորտում համատեղ կոոպերացիոն նախագծերի իրագործման բնագավառում անդամ պետությունների համագործակցության հարցերի մշակում	Հանձնաժողով, անդամ պետություններ		անհրաժեշտության դեպքում

Միջոցառումը*	Կատարողը	Որոշումն ընդունող մարմինը	Կատարման ժամկետը
50. Փայտամշակման եւ փայտե ապրանքների արտադրության բնագավառում անդամ պետությունների համագործակցության հարցերի մշակում	Հանձնաժողով, անդամ պետություններ	-	անհրաժեշտության դեպքում
51. Էներգետիկ մեքենաշինության եւ էլեկտրատեխնիկական արդյունաբերության բնագավառում անդամ պետությունների համագործակցության հարցերով առաջարկության մշակում	Հանձնաժողով, անդամ պետություններ	—	անհրաժեշտության դեպքում
52. Էլեկտրամոբիլների արտադրության եւ լիցքավորման ենթակառուցվածքի բնագավառում անդամ պետությունների համագործակցության հարցերի մշակում	Հանձնաժողով, անդամ պետություններ	-	անհրաժեշտության դեպքում
53. Այնպիսի ոլորտներում քաղաքականությունների մշակմանը մասնակցում, ինչպիսիք են առեւտրային, մաքսասակագնային, մրցակցային, պետական գնումների, տեխնիկական կարգավորման, ձեռնարկատիրական գործունեության զարգացման, տրանսպորտի եւ ենթակառուցվածքի ոլորտները, ինչպես նաեւ այլ ոլորտներում, անդամ պետությունների արդյունաբերական համալիրների զարգացման հաշվառման համար	Հանձնաժողով, անդամ պետություններ		մշտական
54. Մեքենաշինության զարգացման հարցերով համակարգող խորհրդի հետ փոխգործակցություն	Հանձնաժողով, անդամ պետություններ	-	մշտական
XIX. Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրագործման ամենամյա դիտանցման եւ վերլուծության արդյունքների մասին			
55. Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրագործման ամենամյա դիտանցման եւ վերլուծության արդյունքների մասին Հանձնաժողովի զեկույց, որի արդյունքներով կարող են ճշտվել ԱՀՀՈՒ շրջանակներում տնտեսական գործունեության գերակա տեսակները	Հանձնաժողով	Հանձնաժողովի խորհուրդ	յուրաքանչյուր տարի՝ սկսած 2017 թվականից
XX. Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղություններում, գործունեության գերակա տեսակների ցանկում, զգայուն ապրանքների ցանկում փոփոխություններ կատարելու մասին			
56. Միության մարմնի՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղություններում փոփոխություններ կատարելու (ճշգրտելու) մասին նորմատիվ ակտի մշակում	անդամ պետություններ, Հանձնաժողով	Եվրասիական միջկառավարական խորհուրդ	անհրաժեշտության դեպքում